

06/07/2005  
համար 333 Ն

«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 22-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի  
02.06.09թ. թիվ 166-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 22**

**ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
 ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ**

**ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը:

**ԳԼՈՒԽ II. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2. Վճարահաշվարկային կազմակերպությունները՝

- Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպություններ,
- Վճարային գործիքների պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ,

Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների ներքոհիշյալ ձևերը՝ նշված պարբերականությամբ:

ա) Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվություններ:			
	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	2	3	4
1	Հաշվեկշիռ	1	կիսամյակային
2	Հաշվետվություն կազմակերպության ֆինանսական արդյունքների (եկամուտների և ծախսերի) վերաբերյալ	2	կիսամյակային
3	Հաշվետվություն դրամական հոսքերի վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	3	կիսամյակային
4	Հաշվետվություն գործընկեր կազմակերպությունների նկատմամբ ունեցած պարտավորությունների և պահանջների վերաբերյալ	4	եռամսյակային
5	Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունների կողմից մատուցված վճարային ծառայությունների վերաբերյալ	5	եռամսյակային
6	Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն արտերկրից մուտք եղած և Հայաստանի Հանրապետությունից արտերկրներ փոխանցված գումարների վերաբերյալ	6	ամսական
7	Կանոնադրական կապիտալի ձևավորման մասին	7	կիսամյակային և յուրաքանչյուր փոփոխության դեպքում

բ) Վճարային գործիքների պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվություններ:

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	2	3	4
1	Հաշվեկշիռ	21	կիսամյակային
2	Հաշվետվություն կազմակերպության ֆինանսական արդյունքների (եկամուտների և ծախսերի) վերաբերյալ	22	կիսամյակային
3	Հաշվետվություն դրամական հոսքերի վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	23	կիսամյակային
4	Հաշվետվություն սեփական կապիտալի փոփոխությունների վերաբերյալ	24	կիսամյակային
5	Հաշվետվություն վճարային գործիքների քլիրինգ և պրոցեսինգ իրականացնող կազմակերպության կողմից մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	25	ամսական
6	Կանոնադրական կապիտալի ձևավորման մասին	26	կիսամյակային և յուրաքանչյուր փոփոխության դեպքում

### ՓԼՈՒԽ III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ


3. Վճարահաշվարկային կազմակերպությունները հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները ներկայացնում են և՛ թղթային եղանակով, և՛ ֆայլի տեսքով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղադրված «Սի Բի Էյ նեթ» համակարգին միացված տերմինալի, էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային կրիչների միջոցով: Թղթային եղանակով հաշվետվությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողից տրամադրված ֆայլերին համապատասխան: Ֆայլերի տեսքով հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային կազմակերպություններին ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնց փոփոխելն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված, եթե սույն կարգով այլ բան սահմանված չէ:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում նշվում է ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր. ամիս. տարի (օրինակ՝ 31/05/2005): Ինչպես նաև սահմանված հաշվետվությունները, ներառյալ դրանցում նշված անվանումները, պարտադիր լրացվում են հայերեն լեզվով:

Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվությունները լրացվում և ներկայացվում են լիցենզավորված վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունված 24 նոյեմբերի 2004թ., ՀՕ-150-Ն) համաձայն:

4. Վճարահաշվարկային կազմակերպությունները, հաշվետվությունները էլեկտրոնային կրիչների վրա կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս, ֆայլերը կողմորում են Կենտրոնական բանկի կողմից կազմակերպությանը տրամադրված հնգանիշ կոդին համապատասխան (օրինակ՝ «Արմենիան Քարդ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված կոդն է - 80200 ):

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



**ԳԼՈՒԽ IV. ԴՐԱՍՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

5. Թիվ 1, 2, 3 հաշվետվությունները լրացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2001 թվականի դեկտեմբերի 12-ի «Կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը» հաստատելու մասին» թիվ 465 հրամանով սահմանված ձևով և կարգով և ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ կիսամյակային կտրվածքով, մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 28-ը: Այս հաշվետվությունները կարող են ներկայացվել միայն թղթային եղանակով:

6. Թիվ 4 «Գործընկեր կազմակերպությունների նկատմամբ ունեցած պահանջների և պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության մեջ նշվում է հաշվետու ժամանակաշրջանի առաջին և վերջին օրերի ամսաթվերը:

Հաշվետվությունը պետք է պարունակի հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունը աշխատել է նաև շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը՝ ապա այդ օրվա) դրությամբ տվյալները:

Սույն կանոնակարգի իմաստով գործընկեր կազմակերպություններ են համարվում այն բոլոր կազմակերպությունները, որոնց հետ տվյալ դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունը համագործակցում է դրամական (փողային) փոխանցում և այլ վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու նպատակով:

Աղյուսակի պարտավորություններ և պահանջներ մասերի «Կազմակերպության անվանումը» սյունակում լրացվում է կազմակերպության անվանումը: Անկախ պետությունների համագործակցության երկրներում գործող գործընկեր կազմակերպությունների անվանումները միաժամանակ լրացվում են նաև ռուսերեն, իսկ այլ երկրներում գործող կազմակերպությունների անվանումները՝ նաև անգլերեն՝ նշելով փակագծերում:

«Կազմ. տեսակը» սյունակում լրացվում է կազմակերպության կազմակերպական-իրավական ձևը (.ՓԲԸ, ՍՊԸ):

«Գտնվելու վայր»-ի «երկիր» և «քաղաք» ենթասյունակներում լրացվում են այն պետության և քաղաքի անվանումները, որտեղ փաստացի գործունեություն է իրականացնում տվյալ կազմակերպությունը (երկիր՝ ՌԴ, քաղաք՝ Մոսկվա):

Արժույթի տեսակը սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով արտահայտված է տվյալ պարտավորությունը կամ պահանջը (AMD, RUR, USD): Եթե մեկ կազմակերպության նկատմամբ ունեցած պահանջները և (կամ) պարտավորությունները արտարժույթի մի քանի տեսակով են, ապա յուրաքանչյուր արժույթով մնացորդը լրացվում է առանձին տողով:

«Մնացորդը հազ. դրամ» սյունակում լրացվում է պարտավորության կամ պահանջի մնացորդը նվազող հաջորդականությամբ (մեծ մնացորդից՝ փոքրը), ընդ որում՝ արտարժույթով պարտավորությունների և պահանջների մնացորդները լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Աղյուսակի «Ռեզիդենտ կազմակերպություններ» և «Ոչ ռեզիդենտ կազմակերպություններ» մասերը լրացվում են ըստ կազմակերպության ռեզիդենտության: Ռեզիդենտության և ոչ ռեզիդենտության սահմանումները տրված են «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ընդունվել է 24.11.2004թ. ՀՕ-135-Ն):

7. Թիվ 5 հաշվետվությունը՝ դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունների կողմից մատուցված վճարային ծառայությունների վերաբերյալ, ներկայացվում է եռամսյակային կտրվածքով և լրացվում է ձև թիվ 5-ին համապատասխան, հետևյալ կերպ.

«Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության բացված հաշիվները կապված իր կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների հետ» աղյուսակում բերվում են տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ՝ կազմակերպության բոլոր այն հաշիվների վերավերյալ, որոնք բացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև արտասահմանում գործող բանկերում/բանկերի մասնաճյուղերում և նախատեսված են իր կողմից մատուցվող վճարահաշվարկային գործունեության իրականացման համար: «Բանկի/մասնաճյուղի անվանումը» սյունակում առանձին տողերով հաջորդաբար նշվում են և՛ Հայաստանի Հանրապետության տարածքում և՛ արտասահմանում գործող բանկերի/մասնաճյուղերի անվանումները, որոնցում բացված են իր հաշիվները: Յուրաքանչյուր բանկում/մասնաճյուղում բացված հաշիվի համար լրացվում է առանձին տող: Եթե որևէ բանկում բացված է միևնույն արժույթով երկու տարբեր հաշիվներ՝ օր. ժամկետային և ընթացիկ, ապա այդ բանկի հաշիվների քանակը սյունակում նշվում է երկու, իսկ տեղեկատվությունը լրացվում է մեկ տողով: «Երկիր» և «Քաղաք/գյուղ» սյունակներում համապատասխանաբար լրացվում է տեղեկատվություն այդ բանկի/մասնաճյուղի գտնվելու վերաբերյալ: «Հաշիվների քանակը» սյունակում լրացվում է բանկում/մասնաճյուղում կազմակերպության գործունեության համար բացված հաշիվների քանակը: «Արժույթի տեսակը» սյունակում նշվում է այդ հաշվով/հաշիվներով իրականացվող գործառնությունների արժույթի տեսակը:

«Սպասարկված հաճախորդներ» աղյուսակում բերվում են տվյալներ կազմակերպության միջոցով սպասարկված այն հաճախորդների վերաբերյալ, որոնք հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարել են փոխանցումներ կամ ստացել են միջոցներ: Հաճախորդները դասակարգվում են երկու մասի՝ «Ֆիզիկական անձինք» և «Այլ անձինք»: «Ֆիզիկական անձինք» տողում բերվում են ֆիզիկական անձանց կողմից կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները: «Այլ անձինք» տողում բերվում են ֆիզիկական անձանցից բացի, մյուս բոլոր հաճախորդների կողմից կատարված գործառնությունները (օրինակ՝ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, բյուջետային կազմակերպություններ և այլն): «Հաճախորդների կողմից կատարված փոխանցումներ» և «Հաճախորդների կողմից ստացված միջոցներ» սյունակներում համապատասխանաբար, ըստ առաջին սյունակի հաճախորդների տարանջատման, նշվում են իրականացված փոխանցումների և ստացումների ծավալները և գործառնությունների քանակները: «Հաճախորդների կողմից կատարված փոխանցումներ» են համարվում կազմակերպության կողմից ստացված միջոցները, որոնք վճարողների կարգադրություններին համապատասխան պետք է վճարվեր համապատասխան շահառուներին: «Հաճախորդների կողմից ստացված միջոցներ» են համարվում կազմակերպության կողմից շահառուներին վճարված միջոցները:

«Կատարված գործառնությունների նպատակայնությունը» աղյուսակում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում կատարված փոխանցումների վերաբերյալ տվյալներ՝ ըստ առաջին սյունակում տրված դասակարգման: Սյունակի «Մասնավոր փոխանցումներ» տողում նշվում են ֆիզիկական անձանց միջև փոխանցումների, ֆիզիկական և տնտեսվարող անձանց միջև փոխանցումների և այլ նմանատիպ փոխանցումների ծավալը և քանակը:

«Կոմունալ վճարումներ» տողում նշվում են հավաքագրված կոմունալ վճարների (օրինակ՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, հեռախոսի վարձ և այլն) ծավալը և քանակը:

«Բյուջետային (հարկային) վճարումներ» տողում նշվում են կազմակերպության միջոցով հաճախորդների կողմից բյուջե ուղղված հարկային, մաքսային և այլ նմանատիպ վճարումների ծավալը և քանակը:

«Կենսաթոշակային և սոցիալական նպաստների վճարումներ» տողում նշվում են ամսվա ընթացքում կազմակերպության միջոցով վճարված (բաժանված) կենսաթոշակների, սոցիալական նպաստների և այլ նմանատիպ վճարների ծավալը և քանակը:

«Այլ վճարումներ» տողում բերվում են սույն աղյուսակի լրացման կարգում վերը նշված դասակարգումից բացի, կազմակերպության միջոցով հաճախորդներին ուղղված փոխանցումների ծավալը և քանակը: Այս տողում ընդգրկվում են նաև կազմակերպության սեփական փոխանցումները Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ տնտեսվարող սուբյեկտների կամ ֆիզիկական անձանց: Ընդ որում սույն աղյուսակում չեն նշվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաճախորդներից կազմակերպության հաշվին/հաշիվներին ուղղված վճարումները (օրինակ՝ կենսաթոշակային վճարումների մայր գումարի ստացումը, որը պետք է բաժանվի թոշակատուներին, և այլ փոխանցումներ) և սեփական ստացումները:

«Տարբեր համակարգերով կատարված փոխանցումներ և ստացումներ» աղյուսակում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված փոխանցումները, արտասահման ուղղված փոխանցումները և արտասահմանից ստացումները: Նշված փոխանցումները, ըստ համագործակցող կողմի, կարող են կատարվել՝ ա) «Կազմակերպության ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի միջոցով (միջմասնաճյուղային)», բ) «ՀՀ տարածքում գործող բանկերի միջոցով», գ) «ՀՀ տարածքում գործող այլ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով», դ) «Ամֆիջականորեն արտասահմանում գործող բանկի միջոցով» և ե) «Ամֆիջականորեն արտասահմանում գործող վճարահաշվարկային կազմակերպության միջոցով»:

«Կազմակերպության ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի միջոցով (միջմասնաճյուղային)» մասում նշվում է վճարահաշվարկային կազմակերպության Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառուցվածքային ստորաբաժանումների միջև կատարված միջմասնաճյուղային փոխանցումները, կապված հաճախորդների վճարումների հետ: Ընդ որում՝ նշվում է նաև կազմակերպության կողմից այդ վճարումները կատարելու նպատակով, փոխանցման համար հիմք հանդիսացող կարգադրության ներկայացման եղանակը, կամ օգտագործված համակարգը (թղթային եղանակով, բանկ-հաճախորդ և այլ համակարգեր): Աղյուսակում դիտարկվում են միայն հաճախորդների կողմից ընդունված կարգադրությունների հիման վրա կատարված փոխանցումների մասին տվյալները, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում միջմասնաճյուղային ստացումների հետ կապված առանձին տվյալներ «ստացումներ» սյունակում չեն նշվում:

Աղյուսակի «ՀՀ տարածքում գործող բանկերի միջոցով» ենթամասում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահման կատարված փոխանցումները: Այս ենթամասում տվյալները լրացվում են ըստ փոխանցման համար հիմք հանդիսացող կարգադրության ներկայացման համակարգի: Հայաստանի Հանրապետության բանկերի միջոցով արտասահման կատարված փոխանցումների ծավալը և քանակը լրացվում է «փոխանցումներ» սյունակում, իսկ «ստացումներ» սյունակում լրացվում է արտասահմանից ստացված և հաճախորդներին վճարված միջոցների ծավալը և քանակը: Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված փոխանցումները այս մասում նշվում են առանձին, ընդ որում՝ միայն կատարված փոխանցումների ծավալների և քանակների վերաբերյալ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում նախաձեռնված փոխանցումների ստացումների հետ կապված առանձին տվյալներ «ստացումներ» սյունակում չեն նշվում: Եթե փոխանցումները կատարվել են միջազգային փոխանցումների համակարգերի միջոցով, ապա դժվարության դեպքում այսպիսի վճարումներից Հայաստանի Հանրապետության տարածքի և արտասահման փոխանցումների տարանջատում կարող է չկատարվել:

Աղյուսակի «ՀՀ տարածքում գործող այլ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով» ենթամասում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում բանկերից բացի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահման կատարված փոխանցումները: Այս ենթամասում տվյալները լրացվում են ըստ

փոխանցման համար հիմք հանդիսացող կարգադրության ներկայացման համակարգի: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով արտասահման կատարված փոխանցումների ծավալը և քանակը լրացվում է «փոխանցումներ» սյունակում, իսկ «Ստացումներ» սյունակում լրացվում է արտասահմանից ստացված և հաճախորդներին վճարված միջոցների ծավալը և քանակը: Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված փոխանցումները այս մասում նշվում են առանձին, ընդ որում՝ միայն կատարված փոխանցումների ծավալների և քանակների վերաբերյալ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում նախաձեռնված փոխանցումների ստացումների մասին տվյալները առանձին չեն նշվում: Եթե փոխանցումները կատարվել են միջազգային փոխանցումների համակարգերի միջոցով, ապա դժվարության դեպքում այսպիսի վճարումներից Հայաստանի Հանրապետության տարածքի և արտասահման փոխանցումների տարանջատում կարող է չկատարվել:

Աղյուսակի «Անմիջականորեն արտասահմանում գործող բանկի միջոցով» ենթամասում «Փոխանցումներ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կողմից իրեն սպասարկող արտասահմանում գտնվող բանկին ներկայացված հանձնարարականների գումարը և քանակը, ըստ հանձնարարականի ներկայացման համակարգի/եղանակի: Իսկ աղյուսակի «Ստացումներ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կողմից արտասահմանում գործող բանկերի միջոցով արտասահմանից ստացված և վճարված միջոցների գումարը և քանակը:

«Անմիջականորեն արտասահմանում գործող վճարահաշվարկային կազմակերպության միջոցով» աղյուսակի «Փոխանցումներ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կողմից իրեն սպասարկող արտասահմանում գտնվող բանկին ներկայացված հանձնարարականների գումարը և քանակը, ըստ հանձնարարականի ներկայացման համակարգի: Իսկ աղյուսակի «Ստացումներ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կողմից արտասահմանում գործող վճարահաշվարկային կազմակերպության միջոցով արտասահմանից ստացված և վճարված միջոցների գումարը և քանակը: Ինչպես նաև այս աղյուսակում լրացվում է կազմակերպության արտասահմանում գտնվող մասնաճյուղի (կառուցվածքային ստորաբաժանման) միջոցով կատարված փոխանցումների և ստացումների վերաբերյալ տվյալները:

Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահման ուղղված վճարումներում չեն ընդգրկվում կազմակերպության մի հաշվից մեկ այլ հաշվի վրա կատարված սեփական փոխանցումները:

Փոխանցված և ստացված արտարժույթային միջոցների վերաբերյալ տվյալները հաշվետվության մեջ լրացվում են ՀՀ դրամով՝ հաշվարկված հաշվետվության ներկայացման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված այդ արժույթի հաշվարկային փոխարժեքի:

Թիվ 5 հաշվետվության մեջ ընդգրկված բոլոր աղյուսակների լրացման ընթացքում տողերի չբավարարման դեպքում կարող են ավելացվել նոր տողեր:

8. Թիվ 6 հաշվետվությունը՝ Դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն արտերկրից մուտք եղած և Հայաստանի Հանրապետությունից արտերկրներ փոխանցված գումարների վերաբերյալ, ներկայացվում է ամսական կտրվածքով և բաղկացած է երկու աղյուսակից: Առաջին աղյուսակում լրացվում է դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպությունների հաճախորդներին Հայաստանի Հանրապետություն արտերկրից փոխանցված ֆինանսական միջոցների և դրանց քանակների, իսկ երկրորդ աղյուսակում՝ հաճախորդների կողմից Հայաստանի Հանրապետությունից արտերկրներ փոխանցված գումարների և դրանց քանակների վերաբերյալ տեղեկատվությունը: Երկու աղյուսակներն էլ լրացվում են նույն սկզբունքով:

Հաշվետվությունը ներկայացվում է հազար ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ եթե փոխանցումը կատարվել է այլ արժույթով, ապա գումարը ԱՄՆ դոլարով ներկայացնելու նպատակով պետք է օգտագործվի տվյալ օրվա դրությամբ արտարժույթ/ԱՄՆ դոլար հաշվարկային կրոս փոխարժեքը: Բացի այդ, «ընդամենը» տողից հետո նշվում է ընդամենը փոխանցումներում ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ռուսական ռուբլու և այլ արտարժույթով կատարված փոխանցումների ծավալները, հաշվարկված ԱՄՆ դոլարով:

Հաշվետվության մեջ ընդգրկված է 50 երկիր: Յուրաքանչյուր տողում լրացվում է տվյալ երկիր փոխանցվող (երկրորդ աղյուսակի համար տվյալ երկրից փոխանցված) գումարների և այդ փոխանցումների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը, որտեղ «Ընդամենը» սյունակում նշվում են բոլոր փոխանցումները, իսկ «Այդ թվում՝ ոչ առևտրային նպատակով» սյունակում՝ միայն ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները:

«Այլ երկրներ» տողում ընդգրկվում են աղյուսակում չնշված երկրները, ընդ որում՝ «այդ թվում» տողերում առանձին արտացոլվում են միայն այն երկրները, որոնցից յուրաքանչյուրի գծով ամսվա ընթացքում կատարվել են ընդհանուր գումարով 1000 ԱՄՆ դոլարը գերազանցող փոխանցումներ:

Հաշվետվության մեջ «Այդ թվում՝ «Քանկային փոխանցումների միջոցով» տողում լրացվում են դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության՝ ա) բանկային հաշիվներով փոխանցումները, բ) առանց բանկային հաշվի բացման բանկային փոխանցումները և գ) դրամական փոխանցումների իրականացման համակարգերի միջոցով կատարված փոխանցումները: «Կանխիկ արտարժույթով» տողում լրացվում են դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության այն փոխանցումները, որոնք կատարվել են կանխիկ ձևով: «Այդ թվում այլ» տողի ենթատողերում առանձին նշվում են ըստ անվանումների դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության այլ դրամական փոխանցումների ձևերը, եթե այդպիսիք առկա են:

Սույն հաշվետվության իմաստով ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ են համարվում.

ա) ֆիզիկական անձի անունով արտերկրից ստացված (ֆիզիկական անձի կողմից արտերկիր փոխանցված) անհատույց ֆինանսական միջոցները, որոնց նպատակը ընթացիկ կարիքների բավարարումն է, մասնավորապես՝ ֆինանսական օգնությունը, նվիրատվությունները, նպաստները, թոշակները և այլ նմանատիպ միջոցները,

բ) աշխատանքի դիմաց ստացված (վճարված) աշխատավարձը, երբ աշխատողը աշխատել է արտերկրում տեղակայված կազմակերպությունում և աշխատավարձը ստանում է գտնվելով արդեն իր երկրում՝ դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության միջոցով,

գ) երբ աշխատողը աշխատում է տվյալ երկրում տեղակայված այնպիսի կազմակերպությունում, որտեղ աշխատավարձը ստացվում է արտերկրից դրամական (փողային) փոխանցում իրականացնող կազմակերպության միջոցով՝ աշխատավարձի ուղղակի փոխանցմամբ:

Մնացած բոլոր դեպքերում գրանցված փոխանցումները չպետք է դիտել որպես ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ և պետք է ներառել միայն «ընդամենը» փոխանցումներում:

Սակայն եթե արտերկրներից Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում առկա են այնպիսի դեպքեր, որտեղ փոխանցման նպատակը հստակ նշված չէ և չկան համապատասխան տեղեկություններ նշված փոխանցումը դասակարգելու համար, ապա դրամական փոխանցումներ կատարող կազմակերպությունը պետք է որպես կողմնորոշիչ ցուցանիշներ վերցնի հետևյալը.

ա) եթե փոխանցումն իրականացնողը իրավաբանական անձ է, ապա նշված միջոցը պետք է դասակարգել որպես առևտրային նպատակով և ցույց չտալ «ոչ առևտրային» սյունակում, այլ ընդգրկել միայն «ընդամենը» ցուցանիշի մեջ,

բ) եթե փոխանցումն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա փոխանցումը պետք է դիտարկել որպես ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցում և ընդգրկել «ոչ առևտրային» սյունակում միայն այն դեպքում, եթե փոխանցվող գումարի չափը չի գերազանցում 20 000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք գումարը:

9. Թիվ 7 հաշվետվությունը ներկայացվում է կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր փոփոխության դեպքում: «Ամսաթիվ» մասում նշվում է կանոնադրական կապիտալի փոփոխման

օրը: «Կազմակերպության կազմակերպական-իրավական ձևը» մասում նշվում է կազմակերպության կազմակերպական-իրավական ձևը (օրինակ՝ բաժնետիրական ընկերություն): «Բաժնետերերի (փայատերերի) լրիվ անվանումը» սյունակը լրացվում է.

- Բաց բաժնետիրական ընկերությունների կողմից՝ 1% և ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի տվյալներն առանձին տողերով, իսկ մինչև 1% բաժնեմաս ունեցող բոլոր բաժնետերերի տվյալները երկու տողով՝ ընդ որում, առաջին տողով լրացվում են ռեզիդենտ իսկ երկրորդ տողով ոչ ռեզիդենտ բաժնետերերը:

- Փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների բոլոր փայատերերի (բաժնետերերի, անդամների) տվյալները առանձին տողերով:

«Ղեկավարների (խորհրդի (դիտորդ խորհրդի) նախագահ և գործադիր տնօրեն) անունը, ազգանունը, հայրանունը» սյունակը լրացվում է միայն իրավաբանական անձ բաժնետերերի (փայատերերի) համար:

Եթե մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձևը» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», եթե մասնակիցը իրավաբանական անձ է և իր բաժնեմասերի 50%-ից ավելին պատկանում է պետությանը՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

«Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար՝ «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով՝ կախված բաժնետոմսի տեսակից (սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպությունների համար վերը նշված սյունակը չի լրացվում):

Բաժնետիրական ընկերությունների համար «Բաժնետոմսերի դեպոզիտարիայում գրանցման օրը/Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը» սյունակում լրացվում է բաժնետոմսերի դեպոզիտարիայում, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպությունների համար՝ Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը:

«Ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ)» սյունակը լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» բառերով՝ կախված մասնակցի ռեզիդենտությունից: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տերմինների սահմանումները տրված են «Արժուրային կարգավորման և արժուրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ընդունվել է 24.11.2004թ. ՀՕ-135-Ն):

«Հայտարարված մասնաբաժին» և «Փաստացի վճարված մասնաբաժին» մասերի «Ընդամենը (հազ. դրամ)» սյունակներում գրվում է «ՀՀ դրամով (հազ. դրամ)» և «արտարժույթով (հազ. միավոր)» սյունակների գումարները, ընդ որում «արտարժույթով (հազ. միավոր)» սյունակների գումարները հաշվարկին մասնակցում են Կենտրոնական բանկում գրանցման օրվա Կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով: «Արտարժույթի կողը» սյունակներում նշվում է արտարժույթի կողը ( USD, EUR): «Տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում (%)» սյունակում լրացվում է յուրաքանչյուր բաժնետերի (փայատերի) մասնակցության տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում:

«II. Փոխկապակցված բաժնետերեր (փայատերեր)» աղյուսակում լրացվում են այն բոլոր բաժնետերերի (փայատերերի) անունները (անվանումները), որոնք փոխկապակցված են: Փոխկապակցված անձանց սահմանումները տրված են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 30.06.96. ՀՕ-68):

Բաժնետիրոջ կամ բաժնեմասի յուրաքանչյուր փոփոխության դեպքում կազմակերպությունը թիվ 7 հաշվետվության հետ մեկտեղ Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև այդ փոփոխության օրինականությունը հաստատող փաստաթղթերը՝ առուվաճառքի պայմանագիր, քաղվածք ռեեստրից, քաղվածք հաշվից: Նշված փաստաթղթերը բաց բաժնետիրական ընկերությունները ներկայացնում են 5%-ից ավելի մասնակցություն ունեցող բաժնետերերի կազմում փոփոխությունների դեպքում:

**ԳԼՈՒԽ V. ՎՃԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊՐՈՑԵՍԻՆԳ ԵՎ ԶԼԻՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

10. Թիվ 21, 22, 23, 24 հաշվետվությունները լրացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2001 թվականի դեկտեմբերի 12-ի «Կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը» հաստատելու մասին» թիվ 465 հրամանով սահմանված ձևով և կարգով և ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ կիսամյակային կտրվածքով՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 28-ը: Այս հաշվետվությունները կարող են ներկայացվել միայն թղթային եղանակով:

11. Թիվ 25 հաշվետվությունը՝ «Վճարային գործիքների քլիրինգ և պրոցեսինգ իրականացնող կազմակերպության կողմից մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ» ներկայացվում է ամսական կտրվածքով և բաղկացած է երկու մասից: Հաշվետվության առաջին մասում բերվում են կազմակերպության պրոցեսինգային գործունեությունը բնութագրող տվյալները, որոնք լրացվում են հետևյալ կերպ.

«Պրոցեսինգային կենտրոնի հետ համագործակցող համակարգերը և սպասարկվող գործիքները» աղյուսակում բերվում են տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ՝ Պրոցեսինգային կենտրոնի հետ համագործակցող համակարգերի, պրոցեսինգային կենտրոնի կողմից սպասարկվող գործիքների, ինչպես նաև համակարգերում իր կարգավիճակի, կամ ստացված սերտիֆիկացման տեսակների վերաբերյալ: Սույն աղյուսակը բաղկացած է երեք սյունակներից: ա) «Համագործակցող վճարային համակարգի անվանումը», բ) «Պրոցեսինգային կենտրոնի կողմից սպասարկվող գործիքի տեսակը», գ) «Պրոցեսինգային կենտրոնի կարգավիճակը կամ սերտիֆիկացման տեսակները»:

«Համագործակցող վճարային համակարգի անվանումը» սյունակում առանձին տողերով բերվում են այն համակարգերի անվանումները, որոնց օպերատորների հետ համագործակցում է պրոցեսինգային կենտրոնը, կամ ունի որևէ կարգավիճակ այդ համակարգերում:

«Պրոցեսինգային կենտրոնի կողմից սպասարկվող գործիքի տեսակը» սյունակում առանձին տողերով բերվում են այն գործիքների տեսակները (օրինակ՝ «ԱրՔա» քարտեր մագնիսական շերտով, «Վիզա» չիպային քարտեր, Ե-դրամ էլեկտրոնային փողեր, և այլն), որոնք սպասարկում է պրոցեսինգային կենտրոնը համագործակցելով առաջին սյունակում նշված համակարգի օպերատորի հետ:

«Պրոցեսինգային կենտրոնի կարգավիճակը կամ սերտիֆիկացման տեսակները» սյունակում նշվում են առաջին սյունակում բերված համակարգերում պրոցեսինգային կենտրոնի կարգավիճակի վերաբերյալ տվյալներ, ըստ նշված յուրաքանչյուր համակարգի, կամ պրոցեսինգային կենտրոնի կողմից ստացած բոլոր սերտիֆիկացումները, որոնք տրվել են նշված համակարգերի կողմից կամ ստացել են այլ կազմակերպությունների կողմից՝ ելնելով համակարգի պահանջներից:

«Այլ» սյունակում նշվում են «Պրոցեսինգային կենտրոնի կարգավիճակը կամ սերտիֆիկացման տեսակները» սյունակի լրացման պահանջներից տարբերվող հիմունքներով, այդ համակարգի գործիքների սպասարկման իրավասության մասին: Օրինակ՝ տվյալ սյունակում նշվում են նաև այն դեպքերը, երբ գործիքի սպասարկումը կատարվում է ոչ թե անմիջապես համակարգի օպերատորի, այլ այդ համակարգի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա և այլն:

«Պրոցեսինգային կենտրոնում գրանցված սպասարկողների դասակարգումը և սպասարկման միջոցները» աղյուսակում բերվում են տվյալներ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ պրոցեսինգային կենտրոնում գրանցված սպասարկման կետերի քանակի վերաբերյալ, որոնք իրականացնում են հաճախորդների սպասարկում և ծառայությունների մատուցում՝ ա) Ֆիզիկապես գործող սպասարկման կետերում տեղադրված սարքավորումների (ԱԳՄ, ՊՈՍ-տերմինալ, իմպրինտեր) միջոցով, բ) վիրտուալ միջավայրում գրանցված կետերում, գ) Այլ սկզբունքով գործող սպասարկման կետերում:

Աղյուսակի «Անվանումը» սյունակում այն կազմակերպությունները, որոնք գրանցված են տարբեր միջավայրերում հաճախորդների վճարային գործիքների սպասարկում իրականացնելու նպատակով՝ դասակարգվում են տարբեր խմբերի: Ընդ որում «Բանկային հաստատություններ» տողում նշվում են բանկերի և վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունների գլխամասը և բաժանմունքները, որոնցում իրականացվում է վճարային

գործիքի սպասարկում: Իսկ «Այլ» տողերում նշվում են այն կազմակերպությունների խմբերը (օրինակ՝ ինտերնետ սրահ, խաղատներ և այլն), որոնց տարանջատումը նշված չէ աղյուսակի տվյալ ենթամասում:

«Ֆիզիկապես գործող սպասարկման կետերի և դրանցում տեղադրված սարքավորումների քանակը» սյունակի «Սպասարկման կետերի քանակը» ենթամասում, ըստ աղյուսակի «Անվանումը» սյունակի դասակարգման, համապատասխան տողերում նշվում է այն կազմակերպությունների քանակը, որոնք գրանցված են տվյալ պրոցեսինգային կենտրոնում և իրականացնում են վճարային գործիքների սպասարկումը՝ ԱԳՄ-ի, ՊՈՍ-տերմինալի կամ իմպրիմտերի միջոցով:

«Ֆիզիկապես գործող սպասարկման կետերի և դրանցում տեղադրված սարքավորումների քանակը» սյունակի մյուս ենթամասերում համապատասխանաբար նշվում են սպասարկման կետերում տեղադրված ԱԳՄ-ների, ՊՈՍ-տերմինալների, իմպրիմտերների քանակը, ըստ համապատասխան խմբերի:

«Վիրտուալ միջավայրում գրանցված սպասարկման կետերի քանակը» սյունակում ըստ «Անվանումը» սյունակի դասակարգման նշվում է տվյալ պրոցեսինգային կենտրոնում գրանցված այն կազմակերպությունների քանակը, որոնք իրենց ծառայություններն են առաջարկում վիրտուալ միջավայրում:

«Այլ սկզբունքով գործող սպասարկման կետեր» սյունակում, ըստ «Անվանումը» սյունակի դասակարգման, նշվում է տվյալ պրոցեսինգային կենտրոնում գրանցված այն կազմակերպությունների քանակը, որոնք գործիքների սպասարկման հետ կապված իրենց ծառայություններն են առաջարկում աղյուսակում չհիշատակված միջոցներով և եղանակներով:

«Պրոցեսինգային կենտրոնի կողմից մատուցած վճարային ծառայությունները քարտերով, էլեկտրոնային փողերով և այլն» աղյուսակում, ըստ վճարային գործիքների տեսակների, բերվում են տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածում դրանցով կատարված գործառնությունների վճարային հոսքերի (ներհամակարգային վճարումներ, այլ համակարգերից ստացված վճարումներ, և դեպի այլ համակարգեր վճարումներ) վերաբերյալ: Ըստ վճարային գործիքների սպասարկման միջավայրի աղյուսակը տարանջատված է հետևյալ խմբերի՝ ա) «Ֆիզիկապես գործող սպասարկման կետերում տեղադրված սարքավորումների (ԱԳՄ, ՊՈՍ, Իմպրիմտեր) միջոցով սպասարկված գործիքներ», բ) «Վիրտուալ միջավայրում սպասարկված գործիքներ», գ) «Այլ սկզբունքով սպասարկվող գործիքներով կատարված վճարումներ»:

Սույն աղյուսակի «Վճարային գործիքների անվանումը» սյունակի համապատասխան ենթամասում, առանձին տողերով նշվում է հաճախորդների կողմից օգտագործված յուրաքանչյուր վճարային գործիքի տեսակը՝ հաշվի առնելով վերջինիս սպասարկման միջավայրը:

«Ֆիզիկապես գործող սպասարկման կետերում տեղադրված սարքավորումների (ԱԳՄ, ՊՈՍ, Իմպրիմտեր) միջոցով սպասարկված գործիքներ» մասում նշվում են պրոցեսինգային կենտրոնում գրանցված ԱԳՄ-ների, ՊՈՍ-տերմինալների, իմպրիմտերների միջոցով կատարված գործառնությունները ըստ սպասարկված վճարային գործիքի տեսակի:

«Վիրտուալ միջավայրում սպասարկված գործիքներ» մասում նշվում են պրոցեսինգային կենտրոնում գրանցված վիրտուալ միջավայրում գործող սպասարկման կետերով կատարված գործառնությունների վերաբերյալ, ըստ վճարային գործիքի տեսակի:

«Այլ սկզբունքով սպասարկվող գործիքներով կատարված վճարումներ» մասում, նշվում է տվյալ պրոցեսինգային կենտրոնում գրանցված այն սպասարկման կետերում կատարված գործառնությունները, որտեղ վճարային գործիքի սպասարկումը կատարվել է աղյուսակում չհիշատակված միջոցներով և եղանակներով:

Վճարային գործիքներով կատարված գործառնությունները (օրինակ՝ կանխիկացում, փոխանցում հաճախորդի հաշվից մեկ այլ հաճախորդի հաշվին, անկանխիկ վճարում ապրանքի դիմաց և այլ նմանատիպ գործառնություններ) ըստ վճարային հոսքերի բնույթի տարանջատված են հետևյալ խմբերի և նշվում են առանձին սյունակներում. ա) «Գործառնություններ պրոցեսինգային կենտրոնում հաշվառված հաճախորդների և սպասարկման կետերի միջև», բ) «Պրոցեսինգային կենտրոնի կողմից գրանցված հաճախորդների կատարված գործառնությունները՝ մեկ այլ պրոցեսինգային կենտրոնում գրանցված սպասարկման կետերում և փոխանցումներ վերջինիս հաճախորդներին», գ) «Մեկ այլ պրոցեսինգային կենտրոնում

հաշվառված հաճախորդների կատարած փոխանցումները՝ հաշվետու պրոցեսինգային կենտրոնում գրանցված (հաշվառված) հաճախորդներին»:

Աղյուսակի «Գործառնություններ պրոցեսինգային կենտրոնում հաշվառված հաճախորդների և սպասարկման կետերի միջև» սյունակներում ըստ վճարային գործիքի տեսակի նշվում է միևնույն պրոցեսինգային կենտրոնում գրանցված հաճախորդների, սպասարկման կետերի միջև կատարված գործառնությունների ծավալը և քանակը: Վերջինիս «Անկանխիկ վճարումներ» սյունակը ներառում է միայն հաճախորդների կատարված անկանխիկ վճարումները սպասարկման կետերում, կոմունալ վճարումները և այլն, բացառությամբ միմյանց հաշիվների վրա կատարված փոխանցումների:

«Անկանխիկ փոխանցում մեկ հաշվից հաճախորդի մեկ այլ հաշվի (բանկային, քարտային և այլն)» սյունակը ներառում է պրոցեսինգային կենտրոնում գրանցված հաճախորդների կողմից կատարված միմյանց բանկային հաշիվներին (բանկային, քարտային և այլն) կատարված անկանխիկ փոխանցումները:

«Կանխիկացում, դրամական միջոցների ստացում» սյունակը ներառում է կանխիկացման գործառնությունները որոնք կատարվել են պրոցեսինգային կենտրոնում գրանցված սպասարկման սարքավորումներով իր հաճախորդների կողմից: Ինչպես նաև նշվում են էլեկտրոնային փողերի և այլ էլեկտրոնային գործիքների դիմաց դրամական միջոցների ստացումները, որոնք բերվում են աղյուսակի այս մասում: Այստեղ ընդգրկվում են նաև էլեկտրոնային փողերի դիմաց դրամական միջոցների ստացումը, այդ հաճախորդի բանկային հաշվի վրա փոխանցելու վերաբերյալ գործառնությունները:

«Պրոցեսինգային կենտրոնում գրանցված հաճախորդների կատարած գործառնությունները՝ մեկ այլ պրոցեսինգային կենտրոնում գրանցված սպասարկման կետերում և փոխանցումներ վերջինիս հաճախորդներին» սյունակում ըստ վճարային գործիքի տեսակի նշվում է դեպի այլ համակարգեր ուղղված վճարումները: Այսինքն՝ պրոցեսինգային կենտրոնում գրանցված հաճախորդների կողմից այլ պրոցեսինգային կենտրոններում գրանցված հաճախորդներին կատարված փոխանցումների ծավալը և քանակը, ինչպես նաև սպասարկման կետերում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները (օրինակ՝ կանխիկացում, փոխանցում հաճախորդի հաշվից մեկ այլ հաճախորդի հաշվին, անկանխիկ վճարում ապրանքի դիմաց և այլ նմանատիպ գործառնություններ): Այս սյունակում լրացվող՝ վիրտուալ միջավայրում կատարված գործառնությունների տարանջատումը Ֆիզիկապես գործող սպասարկման կետերում կատարված գործառնություններից անհնար լինելու դեպքում, այդ տարանջատումը կարող է չկատարվել:

«Մեկ այլ պրոցեսինգային կենտրոնում հաշվառված հաճախորդների կատարած փոխանցումները՝ հաշվետու պրոցեսինգային կենտրոնում գրանցված (հաշվառված) հաճախորդներին» սյունակում ըստ վճարային գործիքի տեսակի նշվում է այլ համակարգերից ստացված վճարումները: Մասնավորապես այլ պրոցեսինգային կենտրոններում գրանցված հաճախորդների կողմից հաշվետու պրոցեսինգային կենտրոնում գրանցված հաճախորդներին կատարված փոխանցումները, ինչպես նաև գրանցված սպասարկման կետերում նրանց կողմից կատարված գործառնությունների ծավալը և քանակը (օրինակ՝ կանխիկացում, փոխանցում հաճախորդի հաշվից մեկ այլ հաճախորդի հաշվին, անկանխիկ վճարում ապրանքի դիմաց և այլ նմանատիպ գործառնություններ):

Թիվ 25 հաշվետվության երկրորդ մասում բերվում են կազմակերպության քլիրինգային գործունեությունը բնութագրող տվյալները, որոնք լրացվում են հետևյալ կերպ.

«Քլիրինգի մասնակիցների քանակը» աղյուսակում բերվում է տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ՝ քլիրինգային կազմակերպության մասնակիցների քանակի վերաբերյալ, որոնց համար մատուցվում է այդ ծառայությունը: Աղյուսակի «Մասնակիցներ» սյունակում տրվում է մասնակիցների խմբերի դասակարգումը, իսկ «Մասնակիցների քանակը» սյունակում համապատասխանաբար այդ խմբում առկա մասնակիցների քանակը: Ընդ որում՝ «Այլ» տողում, ավելացնելով նոր տողեր, ըստ առանձին դասակարգման, նշվում են սյունակում չհիշատակված կազմակերպությունները (օրինակ. բորսա, դեպոզիտարիա և այլն), եթե առկա տողերի քանակը չի բավարարում:

«Քլիրինգի միջոցով իրականացված գործառնություններ» աղյուսակում բերվում է հաշվետու ժամանակահատվածում՝ քլիրինգի ենթարկված, տարբեր ֆինանսական միջոցներով կատարված գործառնությունների ծավալը և քանակը:

Աղյուսակի «Ֆինանսական միջոցներ» սյունակում բերվում է մասնակիցների կողմից կիրառված ֆինանսական գործիքների դասակարգումը, որոնց միջոցով իրականացված գործառնությունները «ենթարկվել» են քլիրինգի: «Վճարումներ» սյունակում ըստ համապատասխան ֆինանսական գործիքի, նշվում է կատարված գործառնությունների ծավալը և քանակը հաշվետու ժամանակահատվածում:

«Կորպորատիվ արժեթղթեր» տողի դիմաց բերվում են մասնակիցների կողմից կորպորատիվ արժեթղթերով իրականացված գործառնությունների դիմաց կատարված վճարումների ծավալը և քանակը:

«Պետական արժեթղթեր» տողի դիմաց բերվում են մասնակիցների կողմից պետական արժեթղթերով իրականացված գործառնությունների դիմաց կատարված վճարումների ծավալը և քանակը:

«Արտարժույթային գործառնություններ» տողի դիմաց բերվում են մասնակիցների կողմից արտարժույթային գործառնությունների դիմաց կատարված վճարումների ծավալը և քանակը:

«Դեբետային վճարային գործիքներ» տողի դիմաց բերվում են մասնակիցների կողմից դեբետային գործիքներով (չեկեր, պահանջագրեր և այլ նմանատիպ գործիքներ) կատարված վճարումների ծավալը և քանակը:

«Կրեդիտային վճարային գործիքներ» տողի դիմաց բերվում են մասնակիցների կողմից կրեդիտային գործիքներով (վճարման հանձնարարական, պարբերաբար վճարման հանձնարարական և այլն) կատարված վճարումների ծավալը և քանակը:

«Քարտային գործառնություններ» և «Էլեկտրոնային փողեր» տողերում համապատասխանաբար բերվում են պլաստիկ քարտերով և էլեկտրոնային փողերով կատարված գործառնությունների ծավալը և քանակը:

«Այլ» տողում նշվում են աղյուսակում չհիշատակված գործիքները (օրինակ՝ էլեկտրոնային չեկեր և այլն) որոնցով կատարվել են գործառնություններ:

«Քլիրինգի արդյունքում ձևավորված պարտավորությունները և տրված մերժումները» աղյուսակում բերվում է հաշվետու ժամանակահատվածում քլիրինգային կազմակերպության միջոցով զուտացված վճարումների արդյունքում ձևավորված պարտավորությունների ծավալների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տվյալներ մերժված վճարումների մասին:

«Զուտացման արդյունքում ձևավորված պարտավորություններ» տողի դիմաց՝ «Գումար» սյունակում, բերվում է քլիրինգի սեանսների ընթացքում մասնակիցների վճարումների զուտացման արդյունքում՝ զուտ դիրքերի դուրսբերման ժամանակ ձևավորված պարտավորությունների ծավալը: Հաշվետու ժամանակահատվածի համար այդ պարտավորությունները բերվում են ընդհանուր հանրագումարով: Այս տողի «Սեանսների քանակը» սյունակում բերվում է հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցած քլիրինգային սեանսների ժամանակ զուտ դիրքերի դուրսբերման քանակը:

«Մերժված վճարումներ» տողի դիմաց՝ «Գումար» սյունակում, բերվում է մասնակիցների կողմից նախաձեռնված այն վճարումների ծավալը, որոնք տարբեր պատճառներով չեն կատարվել և մերժվել են: Իսկ «Սեանսների քանակը» սյունակում նշվում է այն սեանսների քանակը, որոնց ընթացքում տեղի են ունեցել այդ մերժումները:

Սույն հաշվետվության մեջ արտարժույթով կատարված գործառնությունները նշվում են ՀՀ դրամով, հաշվարկված հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Թիվ 25 հաշվետվության աղյուսակներում՝ անհրաժեշտ տեղեկատվության լրացման համար տողերի չբավարարման դեպքում կարող են ավելացվել նոր տողեր:

Կազմակերպության կողմից միայն պրոցեսինգային կամ միայն քլիրինգային գործունեություն իրականացնելու դեպքում համապատասխանաբար լրացվում են հաշվետվության առաջին կամ երկրորդ մասերը:

12. Թիվ 26 հաշվետվությունը ներկայացվում է կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր փոփոխության դեպքում: «Ամսաթիվ» մասում նշվում է կանոնադրական կապիտալի

փոփոխման օրը: «Կազմակերպության կազմակերպական-իրավական ձևը» մասում նշվում է կազմակերպության կազմակերպատիրավական ձևը (օրինակ՝ բաժնետիրական ընկերություն):

«Բաժնետերերի (փայատերերի) լրիվ անվանումը» սյունակը լրացվում է.

- Բաց բաժնետիրական ընկերությունների կողմից՝ 1% և ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի տվյալներն առանձին տողերով, իսկ մինչև 1% բաժնեմաս ունեցող բոլոր բաժնետերերի տվյալները երկու տողով՝ ընդ որում, առաջին տողով լրացվում են ռեզիդենտ իսկ երկրորդ տողով ոչ ռեզիդենտ բաժնետերերը:

- Փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների բոլոր փայատերերի (բաժնետերերի, անդամների) տվյալները առանձին տողերով:

«Ղեկավարների (խորհրդի (դիտորդ խորհրդի) նախագահ և գործադիր տնօրեն) անունը, ազգանունը, հայրանունը» սյունակը լրացվում է միայն իրավաբանական անձ բաժնետերերի (փայատերերի) համար:

Եթե մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձևը» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», եթե մասնակիցը իրավաբանական անձ է և իր բաժնեմասերի 50 %-ից ավելին պատկանում է պետությանը՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

«Բաժնետոմսի տեսակը (սովորական, արտոնյալ)» սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար՝ «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով՝ կախված բաժնետոմսի տեսակից (սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպությունների համար վերը նշված սյունակը չի լրացվում):

Բաժնետիրական ընկերությունների համար «Բաժնետոմսերի դեպոզիտարիայում գրանցման օրը/Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը» սյունակում լրացվում է բաժնետոմսերի դեպոզիտարիայում, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպությունների համար՝ Կենտրոնական բանկի գրանցամատյանում գրառում կատարելու օրը:

«Ռեզիդենտ (ոչ ռեզիդենտ)» սյունակը լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» բառերով՝ կախված մասնակցի ռեզիդենտությունից: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տերմինների սահմանումները տրված են «Արժուրային կարգավորման և արժուրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ընդունվել է 24.11.2004թ. ՀՕ-135-Ն):

«Հայտարարված մասնաբաժին» և «Փաստացի վճարված մասնաբաժին» մասերի «Ընդամենը (հազ. դրամ)» սյունակներում գրվում է «ՀՀ դրամով (հազ. դրամ)» և «արտարժույթով (հազ. միավոր)» սյունակների գումարները, ընդ որում «արտարժույթով (հազ. միավոր)» սյունակների գումարները հաշվարկին մասնակցում են Կենտրոնական բանկում գրանցման օրվա Կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փախարժեքով: «Արտարժույթի կողը» սյունակներում նշվում է արտարժույթի կողը (օր.՝ USD, EUR): «Տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում (%)» սյունակում լրացվում է յուրաքանչյուր բաժնետերի (փայատերի) մասնակցության տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում:

«II. Փոխկապակցված բաժնետերեր (փայատերեր)» աղյուսակում լրացվում են այն բոլոր բաժնետերերի (փայատերերի) անունները (անվանումները), որոնք փոխկապակցված են: Փոխկապակցված անձանց սահմանումները տրված են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 30.06.96. ՀՕ-68):

Բաժնետիրոջ կամ բաժնեմասի յուրաքանչյուր փոփոխության դեպքում կազմակերպությունը թիվ 26 հաշվետվության հետ մեկտեղ Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև այդ փոփոխության օրինականությունը հաստատող փաստաթղթերը՝ առուվաճառքի պայմանագիր, քաղվածք ռեեստրից, քաղվածք հաշվից: Նշված փաստաթղթերը բաց բաժնետիրական ընկերությունները ներկայացնում են 5 %-ից ավելի մասնակցություն ունեցող բաժնետերերի կազմում փոփոխությունների դեպքում:

## ԳԼՈՒԽ VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

13. Հաշվետվությունները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում: Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է հանգստյան օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Եթե ներկայացվող հաշվետվություններում բերվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա կազմակերպությունը ներկայացնում է գրություն՝ նշելով այդ մասին:

14. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ մեխանիկական թերություն, իսկ թղթային եղանակով ներկայացման դեպքում՝ չկան լրացման հետ կապված ջնջումներ, և առկա են համապատասխան պատասխանատու անձանց ստորագրությունները և կազմակերպության կնիքը:

15. Կենտրոնական բանկի՝ վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համապատասխան վերահսկողը, հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով, ծանուցման միջոցով վճարահաշվարկային կազմակերպություններից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ: Ծանուցումները, ինչպես նաև տեղեկանքները ներկայացվում են ազատ ոճով:

Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:

Հաշվի առնելով վճարահաշվարկային կազմակերպության գտնվելու վայրը՝ այդ կազմակերպությանը ծանուցումը կարող է տրվել հեռախոսի (հեռախոսագրի), «Սի Բի Էյ նեթ» ցանցի էլեկտրոնային փոստի կամ կապի սահմանված այլ պահուստային միջոցներով:

Այդ ծանուցմամբ վճարահաշվարկային կազմակերպության լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

Ծանուցումը ստորագրում է Կենտրոնական բանկի՝ վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, կամ ղեկավարի տեղակալը և վերահսկողության համար պատասխանատու կոնկրետ ստորաբաժանման ղեկավարը:

## ԳԼՈՒԽ VII. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

16. Ամսական և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ):

17. Տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաջորդող տարվա հունվարի 23-ը: Եթե հունվարի 23-ը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը հունվարի 23-ին հաջորդող առաջին աշխատանքային օրն է:

18. Թիվ 24 հաշվետվությունը սեփական կապիտալի փոփոխությունների վերաբերյալ, ներկայացվում է կապիտալի մեծության կամ կառուցվածքի փոփոխության դեպքում, փոփոխությունը կատարվելուց ոչ ուշ, քան 30 օր հետո:

19. Կենտրոնական բանկի կողմից հաշվետվությունների գործող ձևերը փոխելու կամ հաշվետվությունների նոր ձևեր սահմանելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հրապարակման պահից երեք ամիս հետո, եթե Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ առավել ուշ ժամկետ նախատեսված չէ:

**ԳԼՈՒԽ VIII. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ**

~~20. Առնվազն տարին մեկ վճարահաշվարկային կազմակերպությունները պարտավոր են նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող մամուլում, կամ ինտերնետում գրանցված իրենց տնային էջում տեղեկատվություն հրապարակել իրենց կողմից իրականացվող գործունեության, մատուցվող ծառայությունների պայմանների՝ սակագների (հաճախորդների սպասարկման հետ կապված), ժամկետների, գումարների վճարման կարգի վերաբերյալ: Ինտերնետում իր տնային էջում, տեղեկատվության հրապարակման դեպքում կազմակերպությունը պարտավոր է մամուլում հրապարակել իր տնային էջի հասցեն (ուժը կորցրել է 02.06.09թ. թիվ 166 Ն որոշմամբ): Ինտերնետում տնային էջի գրանցման դեպքում կազմակերպությունը Կենտրոնական բանկին տեղեկացնում է իր հասցեն, և այդ հասցեով կազմակերպվում են համապատասխան հղումներ Կենտրոնական բանկի տնային էջում:~~

21. Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից պարտադիր հրապարակման ենթակա որևէ տեղեկատվության՝ մամուլում կամ իր ինտերնետային էջում հրապարակումից հետո 5-օրյա ժամկետում վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունները պարտավոր են Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին ներկայացնել այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը, կամ ներկայացնում է տեղեկացում ինտերնետային էջի թարմացման մասին:

22. Վճարահաշվարկային կազմակերպությունները արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը մամուլում հրապարակելուց հետո, 10-օրյա ժամկետում, պարտավոր են Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին ներկայացնել այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը և ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթի (ներառյալ կից ծանոթագրությունները) էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակները:

Վճարահաշվարկային կազմակերպությունները արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններն օրենքով սահմանված կարգով մամուլում հրապարակելուց հետո, 10-օրյա ժամկետում, պարտավոր են Կենտրոնական բանկ ներկայացնել բացատրություն, եթե վճարահաշվարկային կազմակերպության արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների և ԿԲ ներկայացված տարեկան հաշվետվությունների տողերում արտացոլված մեծությունների միջև առաջանում է 5 տոկոս և ավելի չափով շեղում: Ընդ որում սույն պահանջը գործում է այն դեպքում, եթե հրապարակվող հաշվետվությունների ճշգրտումը կատարվել է հաշվապահական հաշվառման սխալի հետևանքով: Հաշվապահական հաշվառման սխալ չեն համարվում Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների և Միջազգային Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների միջև առկա հակասությունների հետևանքով առաջացած շեղումները: